ՈՒՐԱՐՏՈՒ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«24» հոկտեմբերի 2022թ. քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունն (այսուհետ՝ Ծառայություն)՝ ի դեմս Ծառայության պետ Սերգեյ Ատոմյանի, մի կողմից, և Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս Համալսարանի ռեկտոր Սեդրակ Սեդրակյանի, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր).

հաշվի առնելով Ծառայության՝ օրենքով նախատեսված հիմնական խնդիրները և Համալսարանի գիտակրթական ու գիտահետազոտական մեծ ներուժը,

նկատի ունենալով հոգեբանության և սոցիոլոգիայի ոլորտում գիտություն-պրակտիկա սերտ փոխգործակցությունն ապահովելու և անհրաժեշտ տեսական գիտելիքներ ունեցող պրակտիկ հոգեբաններ և սոցիալական ծառայողներ պատրաստելու՝ Համալսարանի որդեգրած քաղաքականությունը,

բարձր գնահատելով Համալսարանի պատրաստակամությունը՝ Ծառայության աշխատակիցների համար ապահովելու գիտական, ուսումնական և սոցիալ-հոգեբանական աշխատանքների փորձի ու մասնագիտական հմտությունների մակարդակի բարձրացումը,

ցանկանալով խթանել համագործակցության ծրագրերի իրականացումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող քրեակատարողական ոլորտում.

համոզված լինելով, որ սոցիալական, իրավաբանական հոգեբանությունը և կլինիկական հոգեբանությունը մեծ ազդեցություն ունեն կալանավորված անձանց և դատապարտյալների վերսոցիալականացման և կրկնահանցագործությունների նվազեցման հարցում,

կնքեցին սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1.1. Հուշագրի նպատակն է սահմանել Կողմերի միջև համագործակցության ուղղությունները, ինչպես նաև կանոնակարգել դրա պայմաններն ու եղանակները:

1.2. Հուշագրի շրջանակում Կողմերը կնպաստեն քրեակատարողական ծառայողների մասնագիտական վերապատրաստմանը և վերաորակավորմանը, ինչպես նաև կխթանեն Համալսարանի ուսանողների իրազեկվածությունը քրեակատարողական ոլորտի մասին:

ՀՈԴՎԱԾ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

2. Կողմերը համաձայնում են համագործակցել հետևյալ ուղղություններով և եղանակներով.

2.1. Իրավաբանական, սոցիալական և կլինիկական հոգեբանության գիտակրթական միջոցառումներ և ծրագրեր իրականացնելու միջոցով քրեակատարողական ոլորտի կայացման կարևոր գործում Կողմերի կարողությունների համատեղում,

2.2 Համալսարանի մասնագիտական ներուժի միջոցով քրեակատարողական համակարգի հոգեբանների և սոցիալական աշխատողների համար նեղ մասնագիտական վերապատրաստումների իրականացում,

2.3 Համալսարանի մասնագիտական ներուժի միջոցով քրեակատարողական համակարգի հոգեբաններին և սոցիալական աշխատողներին մեթոդական աջակցության տրամադրում,

2.4 Համալսարանի մասնագիտական ներուժի միջոցով քրեակատարողական համակարգի հոգեբանների և սոցիալական աշխատողների հետ սուպերվիզիոն հանդիպումների իրականացում,

2.5 Համալսարանի շրջանավարտներին ՀՀ օրենսդրությանը համապատասխան պրակտիկա անցնելու հնարավորության ընձեռում,

2.6 Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում մասնագիտական քննարկումների, խորհրդակցությունների, թրեյնինգների, առցանց սեմինարների վեբինարների, կլոր սեղանների, գիտաժողովների անցկացում, մասնագիտական գրականության փոխանակում,

2.7. Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հիմնախնդիրների վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքների իրականացում, այդ թվում՝ Կողմերի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբերի կողմից,

2.8. Ուսումնական ձեռնարկների, դասագրքերի և այլ տեսակի հրապարակումների մշակում և ստեղծում, ինչպես նաև քրեակատարողական համակարգի գործիքակազմի

արդյունավետության բարձրացման նպատակով լրամշակում՝ Կողմերի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբերի կողմից,

2.9. Դատապարտյալների ուղղման և սոցիալական վերականգնողական հոգեբանության դասագրքերի և բացատրական բառարանների համատեղ ստեղծում,

2.10. Ծառայության աշխատակիցների կողմից Համալսարանի ուսանողների համար բաց դասախոսությունների անցկացում,

2.11. Կողմերի էլեկտրոնային կայքէջերում միմյանց՝ որպես համագործակցող կառույցների վերաբերյալ տեղեկությունների տեղադրում:

Համագործակցության նպատակով Կողմերը կարող են իրականացնել համատեղ այլ ծրագրեր:

ՀՈԴՎԱԾ 3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

3.1. Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության արդյունավետ իրականացման նպատակով Ծառայությունը և Համալսարանը նշանակում են պատասխանատու ներկայացուցիչներ:

3.2. Պատասխանատու ներկայացուցիչները համակարգում են Կողմերի հաղորդակցությունները, կազմակերպում են համատեղ աշխատանքային հանդիպումները, խորհրդակցությունները և փաստաթղթերի մշակումը, ինչպես նաև Հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպումը:

ՀՈԴՎԱԾ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Կողմերն ընդունում են, որ սույն Հուշագրի շրջանակներում չեն կարող առաջանալ ֆինանսական կամ այլ նյութական պարտավորություններ:

4.2. Համագործակցության հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման համար Կողմերը կարող են ներգրավել ֆինանսական միջոցներ ՀՀ օրենսդրությամբ չարգելված աղբյուրներից:

ՀՈԴՎԱԾ 5. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԿԱՄ ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

5.1. Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում Կողմերը կարող են համատեղ ծրագրերի իրականացման նպատակով կնքել լրացուցիչ համաձայնագրեր, որոնք չեն կարող հակասել Հուշագրին:

5.2. Հուշագրի կամ դրա լրացուցիչ համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին գրավոր ծանուցելով:

5.3. Հուշագրի գործողության դադարեցման դեպքում դրա բաղկացուցիչ մասը կազմող լրացուցիչ բոլոր համաձայնագրերի գործողությունն ինքնաբերաբար դադարում է, եթե Կողմերը փոխադարձ համաձայնությամբ այլ որոշում չեն կայացնում:

5.4. Հուշագրում փոփոխությունները կատարվում են փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Համապատասխան փոփոխությունները բովանդակող փաստաթղթերը կցվում են Հուշագրին և կազմում դրա բաղկացուցիչ մասը:

ՀՈԴՎԱԾ 6. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

6.1. Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանության հետ կապված տարաձայնությունները ենթակա են կարգավորման Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Հուշագիրը բացառիկ իրավունքներ չի վերապահում: Կողմերն ազատ են Հուշագրով նախատեսված համագործակցության առարկայի վերաբերյալ համաձայնագրեր և հուշագրեր կնքել այլ անձանց կամ մարմինների հետ:

7.2. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7.3. Սույն համագործակցության հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գեներալ-մայոր	Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՍԵՐԳԵՅ ԱՏՈՄՅԱՆ	ՍԵԴՐԱԿ ՍԵԴՐԱԿՅԱՆ